իրենց գլուխն են փչրել: Դեղնկան ու չարչարուած մի դաշտ, ճեղքուածքների եւ արխանդների մի բոյն, որի մէջ թռչունը ծերանում է եւ մրրիկը թեւերը դեռին է խփում:

Ու ծո՛վը, խոր, ինքը իր մէջ քաշուած, խորհրդաւոր, լերան նայուածքով Սեւանայ ծովը:

Ուրիշ երկրներում լիճերը պսակ են: Կապոյտը կանանչի հետ հիւսուած զարդ, կախարդ պատահականութիւն, արտացոլումների խաղ եւ հայելիացում, ուր երկինքը դալիս է իր թեւերը լուալու համար: Իսկ Սեւանայ լիճը, ընդհակառակը, պառկած է երկնքի դէմ իբրեւ հաւասար ուժ, իբրեւ ամբողջութեան մաս: Այնքան որ, ամպերի կուտակումներին, անցնող հովերի եւ ցնցուող լոյսերի դունաւէտ քանդակումին ինքն էլ է մասնակցում: Սեւանը բխում է հեռուից, հսկայական մի խորքից, այնտեղ լեռների տակ պառկած դարաւոր շերտերի տակից, իբրեւ մեծդի այս աշխարհի անդուսպ մի բացուածք, լոյսը տենչող մի դաղտնի ուժ եւ մթին մի կեանքի դէպի արեւ բացուած մի պատուհան:

Եւ որովհետեւ ամէն ինչ մերկ է՝ քար եւ ժայռ՝ Սեւանը բացուած գրքի նման պարզ է եւ խոր, մինակ է եւ բարդ, դիւրըմբռնելի է եւ արտասովոր: Այստեղ մրրիկը եւ քամին, ձիւնը եւ փոթորիկը կուտակուած քարերի վրայ իրենց ճիրանների հետքերն են թողել եւ աղքատիկ բոյսերի շուրջը բոց են ման ածել:

Ի՜նչ անծայր մինակութիւն:

Ափի մօտ պառկած՝ դէմքս տուել եմ երկընքին ու աչքերիս մէջ առել ամբողջ անհունը: Գարունը մեղմօրէն սրսփում է սառը մի հովի մօտ:

Հեռում՝ կղզին: Փոքրիկ, ժայռոտ, լերկ ու մերկ: Ոչ քարերի նաւը, որի վրայ նոճիները ծռում են իրենց գլուխը ափից չունչ առնելու համար, ոչ սահող երաշանքը, ուր թռչունները մի վայրկեան կանգ են առնում ջուրի ծաղկած պատրանքը կտուցելու համար, այլ ոտքերը ծանրօրէն յատակի մէջ մխրճած հրաբխային մի կուտակում, որի դէմ բախում է լեռներից եկած հովը, փչրւում մրրիկը ու վայելով դարձպար դառնում:

Քանի նայում եմ, այնքան լիճը մեծանում է, այնքան հեռանում է: Մտածում եմ՝ ջուրի այս դաշտը ճեղքելու համար բնութիւնը ի՞նչ ահաւոր դոշծիքներով պէտք է իջնէ՝ ամպրոպ, շանթ, փոթորիկ: Այսօր ամէն ինչ խաղաղ է, լուռ, ինչպէս դիտեն լռել կեանքի մեծ վայրկեանները, մեր լինելութեան վճռական շրջաններում:

Զդիտեմ ինչո՞ւ, բայց վայրը հոգեպէս ընդգրկելու համար, միտքս դնում է հեռուները, դէպի երեւակայական մի Տիբէտ, ուր անծանօթ կրօնքի խորհրդաւոր վարդապետները անտեսանելի աշխարհների հետ միստիք հաղորդակցութիւններ են ստեղծում, բարձր ժայռերի կատարին փորուած քարայրների մէջ զաղանիքների պսակն են հիւսում եւ հոգիները զարդարում: Ու շրթներս ակամայ փսփսում են ճգնաւոր-բանաստեղծի դեղեցիկ եւ հնչուն անունը՝ Միլարա՛յբա:

Միլարա՛յբա...

Երբ պատուելի Միլարայբան, Բազ-Մայից գալու ժամանակ կանգ առաւ Կեսպ-պապ Նամ-կաճոն մինակեաց վայրում, մի դիշեր նրան ներկայացաւ մի կապիկ նստած նապաստակի վրայ, իր կատարը սուրի նման ցցուած եւ ձեռքին յարդէ աղեղ եւ նետեր: Պատուելին ծիծաղեց: Այն ժամանակ կապիկը յայտարարեց.

«Ես եկել եմ այստեղ ձեզ վախցնելու համար, բայց որովհետեւ անկարելի է ձեզ վախցնել, ես կը վերադառնամ»:

Իսկ պատուելի Միլարայբան պատասխանեց.—

«Ես վստահ լինելով, որ բոլոր երեւոյթները միմիայն երեւակայութեան մէջ գոյութիւն ունին եւ իմ գիտակցութիւնս միացած է յաւիտենականի հետ, քո բոլոր հրաշքներդ, սատանայ, ինձ, Իսհին-ճգնաւորիս համար, միայն ծիծաղելի են»:

Այն ժամանակ սատանան երդում տուաւ ծառայել պատուելի Միլարայբային եւ անհետացաւ, ինչպէս անհետանում է՝ ծիծանը:

Դրանից յետոյ Միլարայբան տեսնելու համար եկան Գրոտ-տանից հաւատացեալ ուղղմաբաշինները, եւ ասացին.

«Ի՞նչ առաւելութիւններ ունին այս վայրերը»:

Հայ մատենագրության թուանշանային գրադարան